

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հրապարակված է 19.12.2022թ.
Ամփոփագրում նշված պայմանները
կարող են փոփոխված լինել
Չեռ. (+374 10) 510 510, www.inecobank.am

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ «ՍՏԱՆԴԱՐՏ» ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՊԼԱՆ start փաթեթ (ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ)

(Որևէ սակագնային պլանի միացման դիմում չներկայացնելու դեպքում
հաճախորդն ավտոմատ միանում է «Ստանդարտ» սակագնային պլանի Start
փաթեթին)

Ճառայություն	Սակագին
Հաշվի բացում (վճարվում/գանձվում է միանվագ Հաշվի բացման պահին)	ՀՀ դրամով ընթացիկ հաշիվ (այսուհետ՝ Հաշիվ) ¹ ՝ Ռեզիդենտ հաճախորդների համար՝ <ul style="list-style-type: none">• 5,000 ՀՀ դրամ• 2,000 ՀՀ դրամ՝ վճարային քարտ պատվիրելու դեպքում,• անվճար՝ Բանկում ժամկետային ավանդ ներդնելու, Բանկի կողմից թողարկված պարտատոմսեր ձեռք բերելու, սոցիալական փաթեթի հաշվի բացման, սոցիալական ապահովության հաշվի բացման, www.sprintonline.am հարթակով վարկավորման դեպքում դեպքում Ոչ ռեզիդենտ հաճախորդների համար՝ <ul style="list-style-type: none">• 25,000 ՀՀ դրամ,• անվճար՝ սոցիալական փաթեթի հաշվի բացման և սոցիալական ապահովության հաշվի բացման դեպքում
Հաշվի ամսական սպասարկման վճար	անվճար
Փաթեթում ներառված անվճար ծառայություններ	<ul style="list-style-type: none">• Ինտեր Օնլայն/Մոբայլ Էլեկտրոնային համակարգ²• ՀՀ դրամով խնայողական հաշիվ³

¹ ՀՀ դրամով երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ընթացիկ հաշվի բացումը համաձայն սույն սակագներով սահմանված «Արտարժույթային ընթացիկ հաշիվների (ԱՄՆ դոլար, եվրո, ՌԴ ռուբլի) բացման» համար սահմանված սակագնի:

² ԻնտերՕնլայն համակարգով հաշվի՝ անվտանգության սարքով սպասարկման դեպքում գանձվում է 10,000 ՀՀ դրամ հաշվի սպասարկման միանվագ վճար: Կճարը կիրառվում է յուրաքանչյուր առանձին սարքի տրամադրման համար: Այն դեպքում, եթե ֆիզիկական անձը գրանցված է որպես իրավաբանական անձի/ԱՁ անունից անվտանգության սարքով Ինտեր Օնլայն/Մոբայլ Էլեկտրոնային համակարգի օգտագործող, ապա մինևույն անվտանգության սարքը կարող է օգտագործել նաև իր հաշիվներով կատարվող գործարքների հաստատման համար: Այս դեպքում անվտանգության սարքով հաշվի սպասարկման միանվագ վճար լրացուցիչ չի կիրառվում: Անվտանգության սարքի վնասման կամ կորստի դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդից գանձել տուգանք 10,000 ՀՀ դրամի չափով:

³ ԱՄՆ դոլարով, եվրոյով, ռուբլիով խնայողական հաշիվները բացվում են անվճար՝ հաճախորդի դիմումի համաձայն:

<p>Արտարժութային ընթացիկ հաշիվների (ԱՄՆ դոլար,Եվրո, ՌԴ ռուբլի) բացում⁴</p>	<ul style="list-style-type: none"> • ԻնելկոՕսլայն Էլեկտրոնային համակարգի միջոցով բացելու դեպքում՝ անվճար • Բանկի մասնաճյուղերում և Կենտրոնական գրասենյակում բացելու դեպքում՝ յուրաքանչյուրը 1,000 ՀՀ դրամ
<p>Հաշվի դրական մնացորդի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույք</p>	<p>0%</p>
<p>Կանխիկ գումարի մուտքագրում Հաշվին</p>	<ul style="list-style-type: none"> • ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո⁵՝ անվճար* • ՌԴ Ռուբլի՝ վարկի մարման նպատակով մուտքագրվող գումարների համար սակագինը 0 ՀՀ դրամ է, մնացած դեպքերի համար՝ 5% <p>* 50,000 ՀՀ դրամ գումարը չգերազանցող ՀՀ դրամով գործարքների համար կիրառելի է սույն փաստաթղթով սահմանված «Կանխիկով դրամարկղային գործառնության սակագինը»:</p>
<p>Կանխիկ գումարի ելքագրում Հաշվից</p>	<ul style="list-style-type: none"> • ՀՀ դրամ՝ 0.2%, բայց ոչ պակաս քան 500 ՀՀ դրամ * • Եվրո՝ 3%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ * • ԱՄՆ դոլար՝ 3%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ * • ՌԴ ռուբլի՝ 0.5%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ * <p>* Սակագինը չի կիրառվում հետևյալ դեպքերում՝</p> <ul style="list-style-type: none"> • Նախորդ օրացուցային և ընթացիկ տարվա ընթացքում կանխիկով մուտքագրված (բացառությամբ քարտային հաշիվներին) գումարների կանխիկացման դեպքում, եթե գումարը կանխիկացվում է այն արժույթով, որով մուտքագրվել է, • Ինելկոբանկ ՓԲԸ-ի անունից ֆիզիկական անձանց հաշիվներին վճարված գումարների կանխիկացման դեպքում, • Ավանդի/պարտատոմսի դիմում/պայմանագրի ժամկետը լրանալուց հետո ավանդի/պարտատոմսի

⁴ Արտարժութային ժամկետային ավանդ ներդնելու կամ Բանկի կողմից արտարժույթով թողարկված պարտատոմսեր ձեռք բերելու դեպքում ավանդի արժույթով/ ձեռք բերվող պարտատոմսերի արժույթով (Բանկի կողմից թողարկված) ընթացիկ հաշիվը բացվում է անվճար: Այն դեպքում, երբ հաճախորդը պատվիրում է արտարժութային քարտ, երբ դիմում է արտարժութային խնայողական հաշիվ բացելու համար,երբ հաճախորդին տրամադրվում է արտարժութային վարկ, ապա այս դեպքերում պարտադիր բացվում է նոր պատվիրվող քարտի արժույթով/ նոր բացվող խնայողական հաշվի արժույթով/ նոր տրամադրվող վարկի արժույթով ընթացիկ հաշիվ համաձայն «Արտարժութային ընթացիկ հաշիվների (ԱՄՆ դոլար,Եվրո, ՌԴ ռուբլի) բացման» համար սահմանված սակագնի:

⁵ 500 Եվրո անվանական արժեքով թղթադրամների ընդունումը իրականացվում է միայն Կոմիտաս 54բ հասցեում գտնվող մասնաճյուղում: 500 Եվրո անվանական արժեքով թղթադրամները բոլոր դեպքերում ընդունվում են 1% միջնորդավճարով:

	<p>գումարի վերադարձման դեպքում, եթե ավանդի պայմանագրային ժամկետը մեծ է 3 ամսից, կամ եթե ավանդի պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի վաղաժամկետ դադարեցումն ընկած ժամանակահատվածը պակաս չէ 3 ամսից:</p> <ul style="list-style-type: none"> • Բանկի կողմից մատուցվող այլ ծառայությունների պայմաններով նախատեսված դեպքերում:
--	--

Փոխանցումներ ընթացիկ հաշվից

Ծառայություն	Սակագին
Ներբանկային փոխանցումներ ⁶	Անվճար
Միջբանկային փոխանցումներ ՀՀ դրամով ⁷	<ul style="list-style-type: none"> • ԻնեկոՕնլայն/Մոբայլ Էլեկտրոնային համակարգի միջոցով կատարելու դեպքում՝ անվճար • Բանկի մասնաճյուղերում և Կենտրոնական գրասենյակում կատարելու դեպքում՝ յուրաքանչյուրը 200 ՀՀ դրամ
Փոխանցումներ Բյուջե ՀՀ դրամով ⁸	<ul style="list-style-type: none"> • ԻնեկոՕնլայն/Մոբայլ Էլեկտրոնային համակարգի միջոցով կատարելու դեպքում՝ անվճար • Բանկի մասնաճյուղերում և Կենտրոնական գրասենյակում

⁶ ԻնեկոՕնլայն/Մոբայլ համակարգերի «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարվող փոխանցումների համար կիրառվում են սույն փաստաթղթով «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարված գործարքների համար սահմանված սակագները, Ինեկոբանկի պաշտոնական կայքի «Առցանց վճարումներ» համակարգով կատարված գործարքների համար կիրառվում են սույն փաստաթղթով «Առցանց վճարումներ» համակարգի միջոցով կատարվող գործարքների համար սահմանված սակագները:

⁷ ԻնեկոՕնլայն/Մոբայլ համակարգերի «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարվող գործարքների համար կիրառվում են սույն փաստաթղթով «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարվող գործարքների համար սահմանված սակագները:

⁸ Բանկի կողմից տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոն չի տրամադրվում:

	կատարելու դեպքում՝ յուրաքանչյուրը 200 ՀՀ դրամ ⁹
Միջբանկային փոխանցումներ արտարժույթով¹⁰ (Թղթային եղանակով ներկայացված հանձնարարական)	<ul style="list-style-type: none"> ՌԴ ռուբլի՝ 0.1% նվազագույնը 5,000 ՀՀ դրամ, առավելագույնը 40,000 ՀՀ դրամ ԱՄՆ դոլար՝ 0.15% նվազագույնը 7,000 ՀՀ դրամ, առավելագույնը 60,000 ՀՀ դրամ Եվրո և այլ արտարժույթ¹¹՝ 0.15% նվազագույնը 9,000 ՀՀ դրամ, առավելագույնը 60,000 ՀՀ դրամ
Միջբանկային «Շտապ» փոխանցումներ (նույն գործառնական օրվա ընթացքում) Թղթային եղանակով ներկայացված հանձնարարականների դեպքում	<ul style="list-style-type: none"> ՀՀ դրամ՝ 2,000 ՀՀ դրամ լրացուցիչ միանվագ վճար Արտարժույթ՝ 5,000 ՀՀ դրամ լրացուցիչ միանվագ վճար
Միջբանկային փոխանցումներ (Յեռակառավարման համակարգերով ներկայացված հանձնարարական)	Միջբանկային փոխանցումների համար թղթային եղանակով ներկայացված հանձնարարականների սակագների նկատմամբ 20% ցածր սակագին (այդ թվում <u>Guaranteed OUR, BEN տարբերակով փոխանցումների և «Շտապ» փոխանցումների համար</u>)
Վճարման հանձնարարականի կատարման վերաբերյալ հարցման ներկայացում, պայմանների փոփոխում կամ չեղյալացում¹²	<ul style="list-style-type: none"> 1,500 ՀՀ դրամ՝ ՀՀ դրամի դեպքում 6,000 դրամ՝ ՌԴ ռուբլու դեպքում 30,000 ՀՀ դրամ՝ ԱՄՆ դոլարի, Եվրոյի և այլ արտարժույթի դեպքում

Դրամարկղային գործառնություններ

Ճառայություն	Սակագին
ԱՄՆ դոլարի, Եվրոյի, ՌԴ ռուբլու հնամաշ թղթադրամների և մինչև 1,996 թվականը թողարկված ԱՄՆ դոլարի թղթադրամների փոխանակում	5%, եթե բանկը համարում է, որ թղթադրամը փոխանակման ենթակա է

⁹ Այն դեպքում, եթե փոխանցումը կատարվում է իրավաբանական անձի կամ ԱԶ-ի համար, գանձվում է միջնորդավճար 1%, նվազագույնը 1,000 ՀՀ դրամ:

¹⁰ Guaranteed OUR տարբերակն ընտրելու դեպքում լրացուցիչ գանձվում է 12,000 ՀՀ դրամ: Սակագինը ներառում է առանց նվազեցումների գումարը ստացողի հաշվին հասցնելու ծախսերը: JPY՝ ճապոնական իենով փոխանցումների դեպքում Guaranteed OUR տարբերակը կիրառելի չէ. երրորդ բանկերի ծախսերը, ամկայության դեպքում, գանձվում են հաճախորդից՝ լրացուցիչ: BEN տարբերակն ընտրելու դեպքում (փոխանցման ծախսերը շահառուի հաշվին) փոխանցումների համար կգործի 5000 ՀՀ դրամ սակագինը՝ նշված OUR սակագնի փոխարեն: Վերը նշված տարբերակները չեն տարածվում ռուբլի արժույթով փոխանցումների վրա:

¹¹ JPY՝ ճապոնական իենով փոխանցումների դեպքում սակագինը կազմում է 0.15% նվազագույնը 15,000 ՀՀ դրամ, առավելագույնը 60,000 ՀՀ դրամ:

¹² Եթե գործարքը դեռևս չի կատարվել Բանկի կողմից, տվյալ սակագինը չի կիրառվում: Գանձված փոխանցման միջնորդավճարը չի վերադարձվում հաճախորդին:

Չնամաշ ՀՀ դրամի թղթադրամների փոխանակում	անվճար
Թղթադրամների հաշվարկ, իսկուրթյան ստուգում և փաթեթավորում	10 ՀՀ դրամ յուրաքանչյուր թղթադրամի համար, սակայն ոչ պակաս, քան 1,000 ՀՀ դրամ
500 եվրո անվանական արժեքով թղթադրամների փոխանակում այլ թղթադրամներով կամ փոխարկում այլ արժույթի¹³	1%
Կանխիկով դրամարկղային գործառնության սակագին¹⁴	<ul style="list-style-type: none"> դրամարկղերում 50,000 ՀՀ դրամ գումարը չգերազանցող վարկի մարման և հաշվի համալրման գործարքների համար` 500 ՀՀ դրամ* դրամարկղերում 50,000 ՀՀ դրամ գումարը գերազանցող վարկի մարման և հաշվի համալրման գործարքների համար` սակագին չի գանձվում <p>* Սակագինը չի կիրառվում հետևյալ դեպքերում`</p> <ul style="list-style-type: none"> արտարժույթային վարկերի մարման և հաշիվների համալրման դեպքում, միջբանկային և բյուջե փոխանցումների դեպքում, վարկի ամբողջական մարման դեպքում, վճարային տերմինալների միջոցով առաջարկվող տարբերակներից տարբերվող այլ տրամաբանությամբ վճարում կատարելու դեպքում:

Հաշիվների քաղվածքների և տեղեկանքների տրամադրում

Ճառայություն	Սակագին
Հաշվի ամսական քաղվածքի տրամադրում Բանկում	Անվճար
Հաշվի քաղվածքի տրամադրում փոստով (ամսական)	<ul style="list-style-type: none"> ՀՀ տարածքում` անվճար ՀՀ տարածքից դուրս` 2,000 ՀՀ դրամ + փոստային առաքման ծախսերը¹⁵
Հաշվի քաղվածքի տրամադրում Էլ. փոստով	Անվճար
Հաշվի քաղվածքի կրկնօրինակի տրամադրում	<ul style="list-style-type: none"> մինչև 1 տարվա վաղեմության- 1.000 ՀՀ դրամ 1 տարուց ավել վաղեմության-3.000 ՀՀ դրամ
Տեղեկանքների և տեղեկատվության տրամադրում (մինչև 3 տարի վաղեմության)	Բանկային հաշվի վերաբերյալ և SWIFT հաղորդագրության պատճենի տրամադրում - 3,000 ՀՀ դրամ

¹³ Ճառայությունը մատուցվում է միայն Կոմիտաս 54բ հասցեում գտնվող մասնաճյուղում:

¹⁴ Բանկի մասնաճյուղերում և Կենտրոնական գրասենյակում կոմունալ վճարումներ չեն ընդունվում:

¹⁵ Փոստային առաքումն իրականացվում է տեղական օպերատորի միջոցով, եթե հաճախորդի կողմից այլ հանձնարարական առկա չէ:

	Գործարքների մանրամասների (այդ թվում արագ դրամական փոխանցումների համակարգերով) վերաբերյալ ¹⁶ - 3,000 ՀՀ դրամ
	Վարկերի և դրանց ապահովությունների վերաբերյալ ¹⁷ - 5,000 ՀՀ դրամ ¹⁸
	Եկամտային հարկի փոխհատուցում ստանալու նպատակով հիփոթեքային վարկի և հիփոթեքային վարկի ծրագրային համապատասխանության վերաբերյալ տեղեկանք – անվճար
	Այլ տիպի և/կամ վաղեմության տեղեկանքների և տեղեկատվության տրամադրում- 10,000 ՀՀ դրամ

Ընդհանուր դրույթներ Բանկային հաշվի Ստանդարտ սակագնային պլանի համար

1. «Բանկային հաշվի «Ստանդարտ» սակագնային պլան (ֆիզիկական անձանց համար)» սակագները և «Ինտեկրանկ» ՓԲԸ Տնօրինության կողմից հաստատված «Բանկային սպասարկման հիմնական պայմաններ»-ը (այսուհետ՝ Հիմնական պայմաններ) հանդիսանում են «Բանկային ծառայությունների տրամադրման դիմում/պայմանագիր (ֆիզիկական անձ հաճախորդների համար)» փաստաթղթի անբաժանելի մասը: Սույն ամփոփագրում օգտագործվող հասկացություններն ունեն նույն իմաստը, ինչ Հիմնական Պայմաններում:
 2. Հաճախորդի դիմումի համաձայն սույն սակագնային պլանից այլ սակագնային պլանի անցում կատարելու դեպքում սույն փաստաթղթով սահմանված ծառայությունների գծով կգործեն տվյալ/նոր սակագնային պլանի շրջանակներում գործող համապատասխան փաթեթի սակագները:
 3. Հաշիվ բացելու ցանկություն ունեցող Հաճախորդը կարող է մոտենալ Բանկի ցանկացած Մանրածախ կամ Ունիվերսալ մասնաճյուղ՝ ներկայացնելով հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Աշխատակիցը հաճախորդին է ներկայացնում բանկային հաշվի ծառայության պայմանները և սակագները, ստուգում է ներկայացված փաստաթղթերի լիարժեքությունն ու վավերությունը և դրանց ամբողջականության դեպքում Հաճախորդի հետ կնքվում է բանկային ծառայությունների տրամադրման դիմում/պայմանագիրը և գանձվում է սակագներով սահմանված միջնորդավճարը:
1. Բանկային ընթացիկ հաշիվների բացման համար անհրաժեշտ է ներկայացնել՝
 - ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթուղթ,
 - Հանրային ծառայության համարանիշ կամ այն չստանալու վերաբերյալ տեղեկանք (Հայաստանի Հանրապետության քաղաքացու, Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացու, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի դեպքում),
 - Անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթեր:
 2. Հաշիվները բացվում են անժամկետ: Հաշիվների բացման համար անհրաժեշտ մուտքագրվող նվազագույն գումար, ինչպես նաև հաշվի նվազագույն մնացորդ չի սահմանվում :
 3. ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի արժույթներից բացի այլ արժույթներով հաշիվների բացումն ու սպասարկումն իրականացվում է պայմանագրային սկզբունքով:

¹⁶ 10 գործարքից ավել տեղեկատվության համար կիրառվում է «Այլ տիպի» տեղեկանքների համար սահմանված սակագինը:

¹⁷ 2 և ավելի պայմանագրերի գծով տեղեկատվություն ներառելու դեպքում, կիրառվում է «Այլ տիպի» տեղեկանքների համար սահմանված սակագինը:

¹⁸ Համաձայնությունների սակագները կարգավորվում են համաձայն վարկավորման սակագների:

4. 3,000,000 (երեք միլիոն) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող կանխիկ տրամադրումն իրականացվում է նախօրոք ներկայացված հայտի հիման վրա, որը Բանկին ներկայացվում է առնվազն մեկ օր առաջ՝ մինչև ժամը 14:45-ը: Առանց նախնական պատվերի երեք միլիոն ՀՀ դրամից ավելի գումարների տրամադրումը Բանկի կողմից կարող է մերժվել կամ բավարարվել՝ նշված գումարը գերազանցող գումարի նկատմամբ 0.5% չափով կանխիկ գումարի ելքագրման լրացուցիչ սակագին գանձելու իրավունքով:
5. Եթե Հաճախորդի կողմից ներկայացված հանձնարարականում այլ ժամկետ նշված չէ սույն Սակագներով նախատեսված ներբանկային փոխանցումները փաստացի կատարվում են վճարման հանձնարարականը Բանկի կողմից ընդունելու օրը, իսկ միջբանկային փոխանցումները փաստացի կատարվում են (փոխանցվող գումարը Բանկի կողմից ուղարկվում է միջնորդ կամ շահառուի բանկ)՝
 - վճարման հանձնարարականը Բանկի կողմից ընդունելու օրը, եթե
 - ▼ Թղթային հանձնարարականը ներկայացվել է մինչև 13:00-ն,
 - ▼ Հեռակառավարման համակարգերով հանձնարարականը ներկայացվել է մինչև 14:00-ն:
 - վճարման հանձնարարականը Բանկի կողմից ընդունելու օրվան հաջորդող գործառնական օրը (բացառությամբ են կազմում «Շտապ», հանձնարարականները, որոնք ընդունվում են մինչև տվյալ գործառնական օրվա ժամը 15:00-ն և կատարվում են նույն գործառնական օրը), եթե
 - ▼ Թղթային հանձնարարականը ներկայացվել է 13:00-ից հետո,
 - ▼ Հեռակառավարման համակարգով հանձնարարականը ներկայացվել է 14:00-ից հետո:
 - վճարման հանձնարարականը Բանկի կողմից ընդունելու օրվան հաջորդող գործառնական օրը՝ միջբանկային փոխանցումների հանձնարարականը շաբաթ օրը ներկայացնելու դեպքում:
6. ՌԴ ռուբլի արժույթով մուտքային փոխանցումները Եվրասիական Չարգացման բանկի միջոցով իրականացվելու դեպքում փոխանցված գումարը հաճախորդի բանկային հաշվին մուտքագրելիս գումարի նկատմամբ կկիրառվի 5%, նվազագույնը 3,000 ՀՀ դրամի չափով միջնորդավճար:
7. Եթե Հաճախորդի հաշիվներով մեկ օրացույցային տարի անընդմեջ գործառնություն չի իրականացվել, ապա յուրաքանչյուր հաջորդ օրացույցային տարվա համար Բանկը կարող է սահմանել փաստացի մնացորդի 100% չափով սակագին, բայց ոչ ավել քան 3,000 ՀՀ դրամ: Սակագինը կգանձվի հաջորդ օրացույցային տարվա ընթացքում:
8. Բանկը կարող է միակողմանիորեն՝ առանց դատարան դիմելու փակել գրոյական մնացորդով և մեկ տարի անընդմեջ շարժ չունեցող հաշիվները:
9. Սահմանափակումների բացակայության դեպքում Բանկային հաշիվները փակվում են անվճար:
10. ՈԻՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա, ինչպես նաև Բանկի հետ կնքված գործարքների արդյունքում կիրառված սառեցումների հետևանքով: Ի լրումն Հիմնական պայմաններով նախատեսված դեպքերի՝ առանց Հաճախորդի կարգադրության Հաշվից դրամական միջոցների դուրսգրում կարող է իրականացվել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների, հարկային մարմինների և դրա իրավասություն ունեցող այլ պետական մարմինների կողմից ներկայացված հայտի/ակտերի հիման վրա:
11. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:
12. Ստանդարտ սակագնային պլանի մասին ամբողջական տեղեկատվությանը կարելի է ծանոթանալ բանկի պաշտոնական կայքում՝ www.inecobank.am:

«Ինեկոբանկ» ՓԲԸ կայքի միջոցով -Առցանց վճարումներ- -ի իրականացման սակագներ

Ճառայություն	Սակագին ¹⁹
Հաշվի համալրում	<ul style="list-style-type: none"> • 0.5%` ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կողմից թողարկված քարտերի դեպքում • 2.5%` ArCa համակարգի միջոցով հավաստագրում չտրամադրող բանկերի կողմից թողարկված Visa և Master տեսակի քարտերի դեպքում
Քարտի համալրում	
Ավանդի համալրում	
Վարկի մարում	<ul style="list-style-type: none"> • Վարկային գծի դեպքում կիրառվում է սույն փաստաթղթով <i>Քարտի համալրման</i> համար սահմանված սակագինը <p>Այլ վարկերի դեպքում</p> <ul style="list-style-type: none"> • 100 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար`ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կողմից թողարկված քարտերի դեպքում • 2.5%` ArCa համակարգի միջոցով հավաստագրում չտրամադրող բանկերի կողմից թողարկված Visa և Master տեսակի քարտերի դեպքում

Ընդհանուր դրույթներ -Առցանց վճարումներ- համակարգի միջոցով կատարված գործարքների համար

1. Ինեկոբանկի պաշտոնական կայքում -Առցանց վճարումներ- կարող են իրականացվել տեղական և միջազգային բանկերի կողմից թողարկված ArCa, Visa և Master վճարային քարտերով:
2. -Առցանց վճարումներ- համակարգի միջոցով հնարավոր է կատարել հետևյալ գործարքները`
 - հաշվի համալրում - հնարավոր է կատարել փոխանցումներ Ինեկոբանկի` ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների ընթացիկ և խնայողական հաշիվներին,
 - քարտի համալրում - հնարավոր է կատարել փոխանցումներ Ինեկոբանկի` ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների քարտային հաշիվներին,
 - վարկի մարում - հնարավոր է կատարել Ինեկոբանկի կողմից ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներին տրամադրված վարկերի մարումներ վարկային պայմանագրի կողք մուտքագրելու միջոցով,
 - ավանդի համալրում – հնարավոր է համալրել ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների կողմից Ինեկոբանկում ներդրված ավանդները պայմանագրի համարը մուտքագրելու միջոցով:
3. Մեկ գործարքի առավելագույն գումարը սահմանվում է 500,000 ՀՀ դրամ:
4. Արտարժույթային վճարային քարտով փոխանցում/վճարում կատարելու դեպքում գործարքը տեղի է ունենում ՀՀ դրամով, իսկ փոխարկումը` համաձայն քարտը թողարկող բանկի կողմից սահմանված փոխարժեքի:
5. Արտարժույթային գործարքի դեպքում մուտքագրված գումարը փոխարկվում է համապատասխան արժույթի` համաձայն Ինեկոբանկի կողմից սահմանված փոխարժեքի:
6. Հաճախորդի կողմից գործարքի իրականացման համար անհրաժեշտ գործողությունները պատշաճ կատարելուց հետո Բանկը գործարքի գումարը հասանելի է դարձնում ստացողի քարտին կամ վերջինիս բանկային հաշվին կամ գործարքի գումարի չափով

¹⁹ Անկախ սույն սակագներով սահմանված վճարներից քարտը թողարկող բանկի կողմից կարող են գանձվել վճարներ` համաձայն տվյալ քարտի պայմանների և սակագների:

համալրում/մարում է նշված պայմանագրի համարով/վարկային կողով ավանդը/վարկը առավելագույնը 10 րոպեների ընթացքում:

7. Տեխնիկական խնդիրների/խափանումների դեպքում Բանկը գործարքի գումարը հասանելի է դարձնում ստացողի քարտին կամ վերջինիս բանկային հաշվին կամ գործարքի գումարի չափով համալրում/մարում է նշված պայմանագրի համարով/վարկային կողով ավանդը/վարկը առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում:
8. Հաճախորդի կողմից գործարքի իրականացման համար անհրաժեշտ գործողությունները պատշաճ կատարելուց հետո Բանկը հաճախորդին տրամադրում է գործարքը հավաստող էլեկտրոնային անդորրագիր:
9. Հաճախորդի կողմից գործարքի իրականացման համար անհրաժեշտ գործողությունները պատշաճ կատարելուց հետո Բանկի կողմից գործարքի գումարը ստացողի քարտին կամ վերջինիս բանկային հաշվին հասանելի դարձնելու պահից կամ գործարքի գումարի չափով նշված պայմանագրի համարով/վարկային կողով ավանդի/վարկի համալրման/մարման պահից Բանկի պարտավորությունները համարվում են կատարված:
10. Սույն առցանց վճարումների կատարման համակարգը չի հանդիսանում առևտրի և սպասարկման կետին վճարում կատարելու գործիք և չի երաշխավորում ենթադրյալ բարիքի ստացումը: Բանկը պատասխանատվություն չի կրում գործարքի կատարմամբ դրա մասնակիցներին կամ այլ անձանց պատճառված վնասների համար:
11. Կատարված գործարքները ենթակա չեն չեղարկման առանց գումարը ստացող անձի համաձայնության:

Ինեկո Օնլայն/Մոբայլ համակարգում «Փոխանցում քարտին» ծառայության սակագներ

Ծառայություն	Սակագին
Փոխանցում Ինեկոբանկի ընթացիկ դրամային հաշիվներից	
Ինեկոբանկի կողմից թողարկված վճարային քարտին	0%
ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտին	0.5%
Փոխանցում Ինեկոբանկի կողմից թողարկված դրամային վճարային քարտերից²⁰	
Ինեկոբանկի կողմից թողարկված վճարային քարտին	0%
ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտին	0.5%
Փոխանցում Ինեկո Օնլայն/Մոբայլ համակարգում կցված այլ բանկերի կողմից	

²⁰ Անկախ սույն փաստաթղթով սահմանված սակագներից լրացուցիչ գանձվում է տվյալ վճարային քարտի պայմաններով և սակագներով սահմանված քարտից քարտ/քարտային հաշվից Նույն հաճախորդի այլ բանկային հաշիվներին փոխանցումների համար սահմանված սակագինը:

Թողարկված վճարային քարտերից²¹

Ինտեկոբանկի կողմից թողարկված վճարային քարտին	0.5%
ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտին	1%

Ընդհանուր դրույթներ Ինտեկո օնլայն/մոբայլ համակարգում «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարված գործարքների համար

1. Փոխանցում քարտին ծառայությունը հնարավորություն է տալիս Ինտեկոբանկի ընթացիկ դրամային հաշիվներից, Ինտեկոբանկի կողմից թողարկված դրամային վճարային քարտերից, ինչպես նաև Ինտեկո Օնլայն/Մոբայլ համակարգում կցված²² ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերից փոխանցումներ կատարել ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կողմից թողարկված ցանկացած վճարային քարտի: Տվյալ ծառայության միջոցով փոխանցումները իրականացվում են ՀՀ դրամով:
2. Փոխանցող և/կամ ստացող քարտի արժույթը ՀՀ դրամից տարբեր լինելու դեպքում փոխարկումը կատարվում է համաձայն համապատասխանաբար փոխանցող և/կամ ստացող քարտը թողարկող բանկի կողմից սահմանված փոխարժեքի:
3. Տվյալ ծառայության միջոցով կատարված փոխանցումների դեպքում փոխանցվող գումարը քարտին հասանելի է դառնում հաշված ռոպեների ընթացքում:
4. Սույն փաստաթղթով սահմանված միջնորդավճարը գումարվում է գործարքի գումարին և գանձվում անմիջապես գործարքի ժամանակ:
5. Մեկ գործարքի առավելագույն գումար է սահմանվում 500,000 ՀՀ դրամը:

Բանկի հետ հաղորդակցման եղանակ

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՍ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՏՅՈՒՄԸ ԱՄԵՆԱՐԱՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՅՈՎՈՒՄ Է ԳԱՐՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

Ուշադրություն՝

1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է Հաճախորդից «ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (սման պահանջի առկայության դեպքում):
2. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Հաճախորդի՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

²¹ Անկախ սույն փաստաթղթով սահմանված սակագներից թողարկող բանկի կողմից կարող են սահմանվել այլ վճարներ՝ համաձայն տվյալ քարտի սպասարկման պայմանների և սակագների:

²² Ինտեկո Օնլայն/Մոբայլ համակարգում այլ բանկի վճարային քարտի կցման և սպասարկման պայմաններն ու սակագները կարգավորվում են «Ինտեկո օնլայն/մոբայլ համակարգում այլ բանկի վճարային քարտի կցման պայմաններ և սակագներ» փաստաթղթով:

Ձեր ֆինանսական տեղեկատու

«Ձեր ֆինանսական տեղեկատու»՝ www.fininfo.am, ֆինանսական անձանց անձնագրային ճանաչողական քարտերի ուղղման, ՅԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՉ ՅԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԳՅՈՒՄԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՅԱՄԱԿԱՐԳ Է:

Բանկային հաշիվների սպասարկման հիմնական պայմաններ

1. Ստորև ներկայացված դրույթները կարգավորում են Բանկի և Հաճախորդի միջև բանկային, ներառյալ՝ ընթացիկ, քարտային, ավանդային և այլ հաշիվների բացման և սպասարկման կապակցությամբ ծագող պայմանագրային հարաբերությունները: Հաշիվների առանձին տեսակների առանձնահատկությունները և հաշիվներով իրականացվող գործառնությունների տեսակները կարգավորվում են Հիմնական պայմաններով, սակագներով, ուղեցույցներով, ինչպես նաև Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերով:
2. Բանկի կողմից առաջարկվում են տարբեր հնարավորություններ ընձեռող հաշիվներ: Ընթացիկ հաշիվները հնարավորություն են ընձեռում իրականացնել կանխիկի մուտքագրում և ելքագրում, դրամական միջոցների վճարումներ և փոխանցումներ, ինչպես նաև Բանկի կողմից սահմանված այլ գործառնություններ:
3. Խնայողական հաշիվներով իրականացվող գործառնությունների տեսակները սահմանվում են համապատասխան սակագներով: Խնայողական հաշիվներին առկա միջոցները համարվում են ցպահանջ ավանդներ:
4. Յուրաքանչյուր հաշիվ սպասարկում է միայն մեկ արժույթ:
5. Մինևույն արժույթով մեկից ավելի հաշիվների առկայության դեպքում Հաճախորդը կարող է տեղեկացնել Բանկին այն հաշիվ մասին, որն օգտագործվելու է համապատասխան գործառնության (օրինակ՝ ավանդի տոկոսների վճարման) համար, եթե դա հնարավոր է տվյալ գործառնության կանոններով: Բանկը կարող է իր հայեցողությամբ ընտրել Հաճախորդի համապատասխան հաշիվը և այն օգտագործել համապատասխան գործառնության համար:
6. Մուտքագրված թղթադրամների և մետաղադրամների կեղծված լինելու հետ կապված կասկածների դեպքում Բանկը կարող է առգրավել դրանք՝ հանձնելով իրավապահ մարմիններին կամ մասնագիտացված անձանց՝ հետազոտության համար: Այդ դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում հաշվին մուտքագրված գումարի պակասորդի համար:
7. Իր հաշվից այլ անձանց հաշիվներին գումարներ փոխանցելու համար Հաճախորդը կարող է վճարման հանձնարարականներ ներկայացնել Բանկի մասնաճյուղերում, ԻնտերՕնլայն համակարգի միջոցով, ինչպես նաև քարտային հաշվին կցված վճարային համակարգերի միջոցով, եթե վերջիններս թույլ են տալիս իրականացնել միջոցների փոխանցումներ: Հաճախորդի վճարման հանձնարարականները կատարվում են Հաճախորդի համապատասխան Հաշվին տվյալ հանձնարարականը կատարելու համար (այդ թվում՝ հանձնարարականից բխող Սակագներով նախատեսված համապատասխան վճարները կատարելու) բավարար միջոցների առկայության դեպքում: Հաշվին միջոցների բավարար լինելու փաստը որոշվում է Բանկի կողմից: Վճարման հանձնարարականների մասնակի կատարում չի իրականացվում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
8. Հաճախորդի հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, որոնց գումարը բավարար է հաշվին ներկայացված բոլոր պահանջները բավարարելու համար, այդ միջոցները դուրս են գրվում Հաճախորդի կարգադրությունները և դուրսգրման այլ փաստաթղթերը մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականությամբ), եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Բանկը պարտավոր է հաճախորդի կարգադրությամբ հաշվից դրամական միջոցներ դուրս գրել ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը, եթե այլ ժամկետներ նախատեսված չեն օրենքով, դրան համապատասխան սահմանված բանկային կանոններով կամ սակագներով: Հաճախորդը կարող է ներկայացնել հաշվից ավելի ուշ ամսաթվի միջոցներ փոխանցելու հանձնարարականներ, ինչպես նաև հանձնարարել Բանկին հետագայում պարբերաբար միջոցներ գանձել և փոխանցել վճարման հանձնարարականում նշված հասցեատիրոջը: Այդ դեպքում Բանկը Հաճախորդի հանձնարարականում նշված հասցեատիրոջ օգտին գումարներ է փոխանցում վճարման

հանձնարարականում նշված ժամկետում կամ ամսաթվերին՝ հաշվին բավարար միջոցների առկայության դեպքում:

9. Հաշվից միջոցների դուրսգրումը կարող է իրականացվել երրորդ անձանց հանձնարարականներով՝ համապատասխան վճարային համակարգի կանոնների համապատասխան կամ Բանկի սահմանած ձևով: Բանկն իրավունք ունի մերժել երրորդ անձանց պահանջով միջոցների դուրսգրման գործարքները, եթե դրանք չեն համապատասխանում Բանկի սահմանած պահանջներին:
10. Հաշվից գումարներ ելքագրելիս հաշվին միջոցների անբավարար լինելու դեպքերում Բանկը, Հաճախորդի հետ առանձին կնքված պայմանագրի համաձայն, կարող է վարկավորել հաշիվը (տրամադրել օվերդրաֆտ) և միջոցները դուրսգրել Հաճախորդին տրամադրված վարկային միջոցների հաշվին: Հաշվի վարկավորման արդյունքում Հաճախորդին տրամադրված միջոցների օգտագործման, դրանց նկատմամբ հաշվարկվող տոկոսների հաշվարկման կարգն ու չափը սահմանվում են Բանկի և Հաճախորդի միջև առանձին կնքվող պայմանագրով:
11. Հա
ճախորդի հաշվին կատարված վճարումներն ու այլ մուտքերը կրեդիտագրվում (մուտքագրվում) են հաշվին, ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտքագրելուն հաջորդող բանկային օրը, եթե այլ բան նախատեսված չէ կիրառելի իրավական ակտերով:
12. Հաճախորդի հաշվում դրամական միջոցների անբավարարության դեպքում դրամական միջոցները դուրս են գրվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաջորդականությամբ: Եթե Հաճախորդի հաշվին արգելանք դրված չէ, առաջնահերթության իրավունքով Բանկը գանձում է իր նկատմամբ Հաճախորդի չմարված ժամկետանց պարտավորությունների գումարները: Ընդ որում, Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ սահմանել Բանկի նկատմամբ Հաճախորդի ունեցած պարտավորությունների գումարների գանձման հերթականությունը:
13. Բանկը Հաճախորդի բոլոր հաշիվների մնացորդների, դրամական մուտքերի և հաշվեգրվելիք տոկոսագումարների նկատմամբ ունի գրավի իրավունք՝ ի ապահովումն Հաճախորդի՝ Բանկի հետ կնքված բոլոր գործարքներից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով Բանկի նկատմամբ առաջացած պարտավորությունների կատարման: Հաճախորդն իրավունք չունի առանց Բանկի գրավոր համաձայնության գրավ դնել կամ այլ կերպ ծանրաբեռնել հաշվում առկա և/կամ ստացվելիք դրամական միջոցները:
14. Բանկը ամսական պարբերականությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ Հաճախորդին տրամադրում է հաշվի վերաբերյալ քաղվածք: Բանկը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ հանդիսացող Հաճախորդին կարող է քաղվածք չտրամադրել, եթե հաշվետու ժամանակաշրջանում տվյալ հաշիվը չի դեբետագրվել կամ կրեդիտագրվել: Քաղվածքները տրամադրվում են Հաճախորդի հետ համաձայնեցված եղանակով, այդ թվում ԻնտերՕնլայն Համակարգի միջոցով: Բանկը քաղվածքն ուղարկում է նաև Էլեկտրոնային փոստով, եթե Հաճախորդը Բանկին տրամադրել է իր Էլեկտրոնային փոստի հասցեն: Բանկը կարող է խմբավորել Հաշիվների շարժերը Հաճախորդին ներկայացվող մեկ քաղվածքում:
15. Հաճախորդի պահանջով Բանկը պարտավոր է հնգօրյա ժամկետում Հաճախորդին տրամադրել իր հաշվի վերաբերյալ Հաշվի քաղվածք՝ գանձելով հաշվի քաղվածքի տրամադրման համար Սակագներով սահմանված վճարները:
16. Քաղվածքում արտացոլված տվյալները համարվում են հաշվով կատարված գործարքների մասին պատշաճ ծանուցում: Քաղվածքում ներկայացված տվյալները համարվում են ընդունված և հաստատված Հաճախորդի կողմից, եթե Հաճախորդը քաղվածքի վերաբերյալ դիտողությունները գրավոր ձևով չի ներկայացրել Բանկին՝ քաղվածքը ստանալու պահից 30 (երեսուն) բանկային օրվա ընթացքում: Բանկը պատասխանատու չէ քաղվածքների առաքման հետ կապված փոստային ծառայությունների կամ կապի միջոցների սխալի, թերացման, քաղվածքների կորստյան կամ հափշտակության հետևանքով առաջացած վնասի, ներկայացված պահանջների կամ տեղեկատվության հրապարակման համար:
17. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն՝ առանց դատարան դիմելու դադարեցնել հաշվի սպասարկումը կամ փակել այն, եթե կասկածներ կան հաշիվներով իրականացվող գործառնությունների օրինականության վերաբերյալ կամ Հաճախորդը, Բանկի կողմից սահմանված ժամկետում չի տրամադրել Բանկի կողմից պահանջված տեղեկությունները,

ինչպես նաև Յանտի Կոմիտեի կողմից ստանձնած այլ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում:

18. Յանտի Կոմիտեի կողմից ստանձնված ժամանակ միակողմանիորեն հրաժարվել հաշվից և դիմել Բանկին հաշիվը փակելու համար՝ այդ մասին Բանկին ոչ ուշ քան 7 (յոթ) բանկային օր առաջ Բանկի կողմից սահմանված եղանակով ծանուցելով և ամբողջությամբ մարելով Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորությունները: Բանկը կարող է հրաժարվել հաշիվը փակելուց, եթե հաշվի վրա դրված են արգելանքներ կամ այլ սահմանափակումներ, կամ հաշիվն անհրաժեշտ է Յանտի Կոմիտեի կողմից օգտագործվող այլ ծառայություններից օգտվելու համար, կամ Յանտի Կոմիտեի կողմից սահմանված պարտավորություններ Բանկի հանդեպ: Հաշիվը փակելուց առաջ հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը վճարվում է Յանտի Կոմիտեին, կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշվի՝ Յանտի Կոմիտեի համապատասխան գրավոր դիմումը ստանալուց ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում:
19. Հաշվի փակման պահից դադարեցվում են այդ հաշիվը սպասարկող Քարտերի սպասարկումն ու Յանտի Կոմիտեից օգտվելու Յանտի Կոմիտեի լիազորությունները: Եթե այլ բան սահմանված չէ Բանկի կողմից, հաշիվը փակելիս փակվում են նաև դրան կցված այլ հաշիվները:

Հաշվի սպասարկումից բխող վեճերի լուծման կարգ

1. Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
2. Յանտի Կոմիտեի բողոքը (բացառությամբ՝ բողոք-պահանջի) և դիմումը կարող է Բանկին ներկայացնել առձեռն (հանձնելով գրությունը Բանկի գործունեության վայրում), փոստով (ուղարկելով Բանկի գլխամասային գրասենյակի փոստային հասցեով), Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրված բողոքարկման հայտի միջոցով, հեռախոսով (զանգահարելով Բանկի Կոնտակտային կենտրոն) կամ Բանկի այլ հեռահար հաղորդակցման ուղիներով (Էլեկտրոնային փոստով, Ինտեր Օնլայն համակարգով, սոցիալական ցանցերի միջոցով և այլն): Բողոք-պահանջը Բանկին ներկայացվում է գրավոր՝ առձեռն, փոստով կամ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրված բողոքարկման հայտով:
3. Բանկը բողոքի վերաբերյալ որոշում է կայացնում (բավարարել, մասնակի բավարարել, մերժել) 10 աշխատանքային օրվա ընթացքում:
4. Յանտի Կոմիտեի կողմից ստանձնված ժամանակ միակողմանիորեն հրաժարվել հաշվից և դիմել Բանկին հաշիվը փակելու համար՝ այդ մասին Բանկին ոչ ուշ քան 7 (յոթ) բանկային օր առաջ Բանկի կողմից սահմանված եղանակով ծանուցելով և ամբողջությամբ մարելով Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորությունները: Բանկը կարող է հրաժարվել հաշիվը փակելուց, եթե հաշվի վրա դրված են արգելանքներ կամ այլ սահմանափակումներ, կամ հաշիվն անհրաժեշտ է Յանտի Կոմիտեի կողմից օգտագործվող այլ ծառայություններից օգտվելու համար, կամ Յանտի Կոմիտեի կողմից սահմանված պարտավորություններ Բանկի հանդեպ: Հաշիվը փակելուց առաջ հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը վճարվում է Յանտի Կոմիտեին, կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշվի՝ Յանտի Կոմիտեի համապատասխան գրավոր դիմումը ստանալուց ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում:

Բանկային ծառայությունների մատուցումը հեռակառավարման համակարգերի միջոցով

1. Բանկն առաջարկում է ԻնտերՕնլայն, ԻնտերՄոբայլ և այլ համակարգեր (այսուհետ՝ Յանտի Կոմիտեի կողմից ստանձնված ծառայություններ)՝ ինտերնետով, հեռախոսային կամ SMS հաղորդագրության և կապի այլ միջոցներով բանկային ծառայություններից օգտվելու, ինչպես նաև տեղեկություններ ստանալու հնարավորություն՝ առանց Բանկի այցելելու: Յանտի Կոմիտեի կողմից սահմանված պարտավորությունները, ներկայացնելով վճարման հանձնարարականներ, ստանալ տեղեկություններ, կատարել արտարժույթի փոխանակում, վճարումներ, ներկայացնել և ստանալ (ակցեպտավորել) դիմումներ, հայտեր, առաջարկներ (օֆերտաներ), կնքել պայմանագրեր և այլ գործարքներ, ինչպես նաև իրականացնել տվյալ համակարգում Բանկի կողմից մատչելի դարձված ֆինանսական և այլ գործառնություններ: Յանտի Կոմիտեի կողմից սահմանված պարտավորությունները, դրանց օգտագործման պայմանները և կանոնները հրապարակվում են Բանկի պաշտոնական կայքում կամ համապատասխան Յանտի Կոմիտեից օգտվելու համար սահմանված այլ կայքերում, ծրագրային ապահովման միջոցներում և բջջային հավելվածներում և կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել:

2. Համակարգերը հասանելի են Բանկում համապատասխան հաշիվներ ունեցող Հաճախորդների համար: Հաճախորդին համապատասխան Համակարգից օգտվելու սարքի, օգտագործողի անվան, գաղտնաբառի, ինչպես նաև Հաճախորդին համակարգից օգտվելու հնարավորությունն այլ կերպ ընձեռելը նշանակում է, որ Հաճախորդի և Բանկի միջև կնքվել է Համակարգի տրամադրման պայմանագիր՝ Հիմնական պայմաններին համապատասխան: Համակարգի տրամադրման պայմանագրի անբաժանելի մասն են Հիմնական պայմանները, սակագները, համապատասխան Համակարգի օգտագործման ուղեցույցները, Բանկի ինտերնետային կայքերի, բջջային հավելվածների և այլ ծրագրային ապահովման օգտագործման կանոնները և պայմանները, ինչպես նաև Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերը:
3. Համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ օգտագործողի անվանման, գաղտնաբառերի, կամ այլ հաղորդագրությունների մուտքագրմամբ Բանկն իրականացնում է Հաճախորդի անհրաժեշտ և բավարար նույնականացում, ինչը հիմք է Համակարգերի միջոցով Հաճախորդին բանկային ծառայություններ մատուցելու համար:
4. Հաճախորդին նույնականացնելուց հետո Համակարգ մուտք գործելու համար Հաճախորդի կողմից օգտագործվող գաղտնաբառն ունի թղթային կրիչի վրա դրված բնօրինակ ստորագրությանը համարժեք իրավաբանական ուժ: Հաճախորդի կողմից Համակարգ մուտք գործելուց հետո Համակարգի միջոցով Բանկ ներկայացվող բոլոր հայտերը, դիմումները, պայմանագրերն ու այլ էլեկտրոնային փաստաթղթերը համարվում են ստորագրված Հաճախորդի կողմից: ԻնտեկտՕնլայն Համակարգի միջոցով տեղեկատվություն փոխանակելը հավասարազոր է Բանկի տարածքում առձեռն փոխանակելուն:
5. Համակարգերի միջոցով Հաճախորդների սպասարկումը իրականացվում է միայն Հաճախորդի (Հաճախորդի ներկայացուցչի) մոտ համապատասխան Համակարգից օգտվելու համար անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական ապահովվածության առկայության դեպքում: Ընդ որում Բանկը Հաճախորդին հեռակառավարման համակարգերի միջոցով ծառայություններ մատուցում է բացառապես Բանկի համար ընդունելի ծրագրային և տեխնիկական ապահովվածության միջոցների կիրառմամբ: Համակարգերից օգտվելիս կարող են կիրառվել ինտերնետային, էլեկտրոնային և այլ հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող օպերատորների և այլ անձանց օգտին գանձվող վճարներ, որոնց համար Բանկը պատասխանատվություն չի կրում:
6. Հաճախորդը պարտավոր է խստիվ պահպանել Համակարգ մուտք գործելու գաղտնաբառի և այլ նույնականացնող տվյալների գաղտնիությունը և անհրաժեշտ շրջահայացությունն ցուցաբերել Համակարգերն օգտագործելիս այլ անձանց կողմից Համակարգ ապօրինի մուտքի հնարավորությունը և տվյալների հասանելիությունը բացառելու համար: Բանկը պատասխանատվություն չի կրում դրանք երրորդ անձանց բացահայտվելու արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար:
7. ԻնտեկտՕնլայն և այլ Համակարգերից օգտվելու համար Բանկը կարող է տրամադրել ծրագրային ապահովում, անվտանգության բանալիներ, չիպեր, թրքեններ և Համակարգ մուտք գործելու անվտանգությունն ապահովող այլ սարքեր: Այդ սարքերը համարվում են Բանկի սեփականությունը և ենթակա են օգտագործման Բանկի սահմանած կարգով: Սարքի կորստի կամ փչացման դեպքում Հաճախորդը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Բանկին: Բանկը կարող է պահանջել անհապաղ հետ վերադարձնել Հաճախորդին տրամադրված սարքերը, փոխարինել դրանք, ինչպես նաև սահմանել դրանց օգտագործման հատուկ կարգ և պայմաններ:
8. Համակարգերը ենթակա են օգտագործման դրանց նպատակային նշանակությանը խիստ համապատասխան: Հաճախորդը պարտավոր է պահպանել Համակարգերի ծրագրային ապահովման օգտագործման հետ կապված մտավոր սեփականության բոլոր իրավունքները և թույլ չտալ Համակարգի ծրագրային ապահովման պաշտպանված մասի վերծանում, ձևափոխում, արտատպում և տարածում:
9. Բանկն օգտագործում է Համակարգերով տվյալների փոխանցման անվտանգությունն ապահովող ժամանակակից և հուսալի միջոցներ: Այդուհանդերձ, Հաճախորդը Համակարգերն օգտագործում է իր ռիսկով և Բանկը պատասխանատվություն չի կրում Համակարգերի օգտագործման հետ կապված խափանումների, տվյալների կորուստների, ինչպես նաև Համակարգերի օգտագործումից բխող Հաճախորդների տվյալների բացահայտման և Հաճախորդների ցանկացած այլ կորուստների և վնասների համար:

10. Համակարգերը տրամադրվում են դրանց հասանելիության պահին գործող պայմաններով և հնարավորություն են տալիս օգտվել փաստացի այդ պահին մատչելի գործառնություններից: Հաճախորդը տեղյակ է, որ կախված վճարային համակարգերի կանոններից և տեխնիկական հնարավորություններից, Քարտային և այլ հաշիվների, ինչպես նաև այլ գործառնությունների վերաբերյալ որոշ տեղեկություններ կարող են Համակարգում արտացոլվել կամ թարմացվել հետագայում: Հաճախորդներին առաջարկվող ծառայությունների ցանկն ու առանձին հնարավորությունները կարող են սահմանափակվել կախված Հաճախորդի համակարգչի կամ այլ տեխնիկական միջոցների հնարավորություններից, կապի որակից, Բանկի կողմից իրականացվող տեխնիկական սպասարկման աշխատանքներից և այլ գործոններից: Բանկը կարող է ավելացնել կամ պակասեցնել Համակարգերով մատուցվող գործառնությունների շրջանակը, ինչպես նաև դադարեցնել կամ կասեցնել Համակարգի մատչելիությունը, (ներառյալ՝ լուծել Համակարգի տրամադրման պայմանագիրը)՝ տեխնիկական սպասարկման աշխատանքներ իրականացնելու կամ այլ պատճառներով:
11. Համակարգերի միջոցով Հաճախորդի ներկայացրած հայտերի ուսումնասիրման արդյունքների, ինչպես նաև Հաճախորդի այլ գործառնությունների մասին Բանկը կարող է տեղեկացնել Էլեկտրոնային եղանակով, ներառյալ՝ Համակարգը սպասարկող ինտերնետային էջերի կամ բջջային հավելվածների համապատասխան մասում տեղեկություններ տեղադրելով, Էլեկտրոնային փոստով, բջջային հեռախոսահամարին ուղարկված կարճ հաղորդագրությունների (SMS), Համակարգի բջջային հավելվածների կողմից ուղարկվող հաղորդագրությունների (Push Notifications) միջոցով և այլ եղանակներով: Համակարգի միջոցով կատարված գործառնությունների մասին տվյալները պահպանվում են Բանկի սերվերներում և համարվում են ապացույց՝ վիճելի հարցերի կարգավորման համար:
12. Բանկն իրավունք ունի Համակարգի միջոցով կատարվող գործառնությունների համար նախատեսել սահմանաչափեր, ինչպես նաև Հաճախորդի հանձնարարականներն ու ցուցումները կատարելիս իրականացնել Հաճախորդի ինքնության հավելյալ ստուգում՝ պահանջելով լրացուցիչ ձայնային կամ այլ հաստատում: Բանկը կարող է կասեցնել կամ դադարեցնել Համակարգ մուտք գործելու Հաճախորդի հնարավորությունը՝ սակագներով և այլ փաստաթղթերով նախատեսված վճարները չկատարելու, սույն Հիմնական պայմանների պահանջները խախտելու, ինչպես նաև Հաճախորդի Նույնականության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքերում:
13. Համակարգի տրամադրման պայմանագրի լուծումը չի հանգեցնում Բանկի և Հաճախորդի միջև առկա այլ պայմանագրային հարաբերությունների փոփոխմանը կամ դադարեցմանը, եթե գրավոր ձևով այլ բան համաձայնեցված չէ:

ՃԱՆՈՒՑՈՒՄ ԱՎԱՆՂՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) սահմանումներին:

Հատուցման դեպքը

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

1. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ
2. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ արտարժութային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել եք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Չերաշխավորված բանկային ավանդ

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

- ա) Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
- բ) Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
- գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,
- դ) Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,
- ե) Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,
- զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին: